Արձանագրություն N 3

«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/84» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի նիստի

ք. Երևան

23 նոյեմբեր 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Կարապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Սարգսյան

Մ. Խաչատրյան

Քարտուղար՝

Դ. Միերյան

1. Հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 21.11.2022թ. № 03/26-1/20248 2022 գրությամբ տեղեկացվել է, որ որ 15/11/2022թ. և 16/11/2022թ. ժամը 09:00-ից սկսած էլեկտրոնային աճուրդների համակարգը աշխատել է խափանումներով, ինչի արդյունքում խոչընդոտվել է ինչպես 15/11/2022թ. և 16/11/2022թ. 09:00-ից մինչև ժամը 16:30-ն անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նշված ժամանակահատվածում հրավերներով հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված ընթացակարգերին մասնակցության հայտերի ներկայացման բնականոն ընթացքը և ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հայտարարված **ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/84** ծածկագրով գնման ընթացակարգը դրանց թվում է:
2. Հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի վերը նշված գրությամբ պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:
3. Հիմք ընդունելով վերը նշվածը, հանձնաժողովը որոշեց **ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/84** ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Կարապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Սարգսյան

Մ. Խաչատրյան

Գնման գործընթացը համակարգող քարտուղար՝ Դ. Միերյան